Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

Մարզի խորհրդի նիստը վարում էր ՀՀ Կոտայքի մարզպետ Ահարոն Սահակյանը

ք.Հրազդան 30.06.2023թ. ժամը 11.[00]

ՄԱՄՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

-Վ.Վարդանյան - ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալ
-Հ.Մկրտչյան - ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալ
-Մ.Գևորգյան - ՀՀ Կոտայքի մարզպետի խորհրդական
-Հ.Ալեքսանյան - ՀՀ Կոտայքի մարզպետի խորհրդական
-Ս.Բաղդասարյան - ՀՀ Կոտայքի մարզպետի օգնական
-Լ.Պետրոսյան - ՀՀ Կոտայքի մարզպետարանի գլխավոր քարտուղար
-Մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներ
-Մարզի խորհրդի անդամ համայնքների ղեկավարներ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ՝

1. Մարզի համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման գործընթացի մասին:
(զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հ.Ստեփանյան)

2. Համայնքներում սուբվենցիոն ծրագրերով իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքի մասին:
(զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Հ.Վարդանյան)

3. ՀՀ վարչապետի մոտ 03.04.2023թ. կայացած՝ ՀՀ Արագածոտնի մարզպետարանի 2022թ. գործունեության հաշվետվության խորհրդակցության ՆՎ/73-2023 արձանագրությամբ տրված հանձնարարականների մասին:
(ՀՀ Կոտայքի մարզպետ Ա.Սահակյան)

4. Այլ հարցեր:
4.1Համայնքապետարանների աշխատակազմերի համայնքային ծառայողների վերապատրաստման գործընթացի մասին:
(ՏԻ ԵՎ ՀԳՄ հարցերով վարչության պետ Հ.Ալեքսանյան)

4.2 Մարզի համայնքների տարեկան հողային հաշվեկշռի մասին:
(ՀՀ Կոտայքի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ Գ.Ավետիսյան)

ԼՍԵՑԻՆ՝

1. ՀՀ Կոտայքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հ.Ստեփանյանի զեկույցը մարզի համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման գործընթացի մասին:

Զեկույցն ընդունվեց ի գիտություն: /Կցվում է/:

2. ՀՀ Կոտայքի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Հ.Վարդանյանի զեկույցը համայնքներում սուբվենցիոն ծրագրերով իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքի մասին:

Զեկույցն ընդունվեց ի գիտություն: /Կցվում է/:

3. ՀՀ Կոտայքի մարզպետ Ա.Սահակյանին, որը ներկայացրեց ՀՀ վարչապետի մոտ 03.04.2023թ. կայացած՝ ՀՀ Արագածոտնի մարզպետարանի 2022թ. գործունեության հաշվետվության խորհրդակցության ՆՎ/73-2023 արձանագրությամբ տրված հանձնարարականների մասին:

4. *Այլ հարցերով հանդես եկան:*

4.1 ՏԻ ԵՎ ՀԳՄ՝ հարցերով վարչության պետ Հ.Ալեքսանյանը Համայնքապետարանների աշխատակազմերի համայնքային ծառայողների վերապատրաստման գործընթացի մասին:

4.2 ՀՀ Կոտայքի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ Գ.Ավետիսյանը մարզի համայնքների տարեկան հողային հաշվեկշռի մասին:

ԱՀԱՐՈՆ ՍԱՀԱԿՅԱՆ

Հարգարժան մարզպետ, հարգելի գործընկերներ,

2022 թվականին մարզում սուբվենցիոն ծրագրով հաստատվել էր թվով 60 ծրագրեր՝ ընդհանուր 12.1 մլրդ դրամ բյուջեով:

Ընթացող շինարարությունների ժամանակ քաղաքաշինության վարչության և տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից պարբերաբար կատարվել են չպլանավորված այցելություններ, մշտադիտարկումներ և քննարկումներ՝ ուղղված շինությունների որակի բարձրացման և դրանց ժամկետներում կատարման ապահովմանը:

Ցանկանում եմ նշել, որ որոշ համայնքներում ի հայտ եկան բազմաթիվ թերություններ, որոնց վերաբերյալ կազմվեցին համապատասխան արձանագրություններ: Արձանագրությունները ուղարկվել են համայնքների ղեկավարներին՝ հրահանգելով ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ ներգրավելով կապալառու կազմակերպությանը, տեխնիկական և հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպություններին՝ բացահայտված թերությունները վերացնելու ուղղությամբ:

Արձանագրված թերությունները գրեթե ամբողջությամբ վերացվել են, բացառությամբ 2 ծրագրերի, որոնց պայմանագրերը լուծարվել են և կատարված աշխատանքների համար գումար չի վճարվել /Առինջ և Ծաղկաձոր/:

2022 թվականին մարզում սուբվենցիոն ծրագրով հաստատված 60 ծրագրերից 33-ը ավարտվել են, 4 ծրագրեր չեն իրականացվել, իսկ 23-ը նախատեսված է ավարտել մինչև տարեվերջ:

2023 թվականին մարզում սուբվենցիոն ծրագրով հաստատվել է թվով 39 ծրագիր՝ ընդհանուր 11.5 մլրդ դրամ բյուջեով: 39 ծրագրերից 17-ը արդեն իսկ սկսել են շինարարական աշխատանքները, իսկ մնացածը գտնվում են պայմանագրերի կնքման փուլում:

Տեղեկացնեմ նաև, որ 2024 թվականին պետական բյուջեից սուբվենցիաներ ստանալու նպատակով Կոտայքի մարզի 11 համայնքների կողմից ներկայացվել է 53 ծրագրերի հայտեր՝ ընդհանուր 11.5 մլրդ դրամ արժեքով:

Ցանկանում եմ տեղեկացնել համայնքների ղեկավարներին, որ խիստ ուշադրություն դարձնեն սուբվենցիաներ ստանալու համար ծրագրային հայտերի գնահատման միջգերտեսչական հանձնաժողովի 2023 թվականի մարտի 29-ին կայացած նիստի արձանագրությանը, որով հստակ արձանագրված է, որ պայմանով հավանության արժանացած ծրագրերը, մինչև համապատասխան մրցույթ հայտարարելը՝ լրամշակել սուբվենցիայի փաթեթները ոլորտային

գերատեսչությունների կողմից տրված դիտողությունների հիման վրա, հակառակ դեպքում ներկայացված դիտողությունները հաշվի չառնելու դեպքում ՀՀ պետական բյուջեից համաֆինանսավորում չի կատարվի:

ՀՀ Կոտայքի մարզում քաղաքաշինության վարչության կողմից արձանագրվել են միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհամերձ գոտիներում թվով 127 ինքնակամ շինություններ, որոնց վերաբերյալ հորդորում եմ համայնքների ղեկավարներին՝ իրականացնել գործուն քայլեր տվյալ շինությունների օրինականացման կամ ապամոնտաժման և հողամասը նախկին տեսքի բերելու ուղղությամբ:

Ցանկանում եմ տեղեկացնել համայնքների ղեկավարներին, որ տարածքային կառավարման մարմիններին վերապահված վերահսկողական և կառավարչական գործառույթների շրջանակներում ամենօրյա անմիջական հսկողության ներքո պահել միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների պաշտպանական գոտիների, հողերի օտարման, դրանց հողային պաստառներում համայնքների ղեկավարների կողմից տրված շինթույլտվությունների օրինականության գործընթացը՝ հաշվի առնելով այն իրողությունը, որ չնայած պետության կողմից իրականացվող կանխարգելիչ միջոցառումներին, այդուամենայնիվ շարունակ արձանագրվում են օրենքով չթույլատրված վայրերում հողերի օտարման և շինթույլտվությունների ապօրինի տրամադրման դեպքեր:

Պայմանավորված հանրապետության մասշտաբով իրականացվող ճանապարհաշինարարական հսկայածավալ աշխատանքներով՝ նախականխող քայլեր ձեռնարկել միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների ազդեցության գոտիներում գտնվող հողակտորների օտարումը բացառելու ուղղությամբ՝ հետագայում դրանց հետգնման անցանկալի գործընթացներից խուսափելու նպատակով:

Ընդունել ի գիտություն, որ չնայած հողերի նպատակային նշանակության փոփոխության, ճանապարհամերձ հատվածներում իրականացվող շինարարական աշխատանքների բնագավառում ճանապարհը տնօրինողի և շահագրգիռ այլ կառույցների կողմից տրամադրվող դիրքորոշումներին և եզրակացություններին՝ այդուհանդերձ, համայնքների վարչական սահմաններում իրականացվող շինարարական աշխատանքների օրինականության ապահովման առաջնային պատասխանատուն համայնքն է՝ դրանից բխող իրավական և ֆինանսական հետևանքներով:

Ինքնակամ շինությունների մասով հարկ եմ համարում նշել, որ քաղաքային բնակավայր ընդգրկող համայնքների վարչական սահմաններում կառուցված ինքնակամ

կառույցների դեպքում հաշվառման ժամկետ է սահմանված մինչև 2024 թվականի հունվարի 1-ը, իսկ գյուղական բնակավայրերից բաղկացած համայնքների վարչական սահմաններում կառուցված ինքնակամ կառույցների դեպքում՝ 2025 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածը:

Առաջարկում եմ համայնքների ղեկավարներին գործուն միջոցներ ձեռնարկել նշված ժամանակահատվածում համայնքների վարչական տարածքում շինությունների հաշվառման և հետագայում դրանց օրինականացման ուղղությամբ:

Օգտվելով առիթից ցանկանում եմ տեղեկացնել, որ ՀՀ պետական բյուջեից 2023 թվականին մարզում կիրականացվի 102 կմ միջպետական, հանրապետական և մարզային նշանակության ճանապարհների հիմնանորոգման աշխատանքներ՝ շուրջ 13,5 մլրդ դրամ բյուջեով: Թվով 12 ճանապարհների մրցույթներն արդեն իրականացվել են, իսկ 6-ում արդեն իսկ մեկնարկել են շինարարական աշխատանքներ:

Քաղաքաշինության վարչության պետ Հրաչյա Վարդանյան

30.06.2023թ.

Զ Ե Կ ՈՒ Յ Ց

Մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման արդյունքները

2023 թվականի հունիսի 29-ի դրությամբ մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման կատարողականը բոլոր հարկատեսակների գծով կազմել է 82,2%: Նախատեսված 8 միլիարդ 661 միլիոն 493 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 7 միլիարդ 116 միլիոն 770 հազար դրամ, նախատեսված պլանը թերակատարվել է 1 միլիարդ 544 միլիոն 722 հազար դրամով կամ 17.8%-ով: Սեփական եկամուտների հավաքագրումը 2023 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում ըստ առանձին հարկատեսակների ունի հետևյալ պատկերը:

1. **Գույքահարկ /փոխադրամիջոցներից/** – Մարզում կատարողականը կազմել է 133,0%: Նախատեսված 817 միլիոն 361 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 1 միլիարդ 87 միլիոն 147 հազար դրամ, կամ ավել է հավաքագրվել 269 միլիոն 785 հազար դրամ:

Այս հարկատեսակի գծով բոլոր համայնքներում արձանագրվել են բարձր ցուցանիշներ:

2. **Անշարժ գույքի հարկ** – Կատարողականը կազմել է 102.2 %: Նախատեսված 653 միլիոն 203 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 667 միլիոն 785 հազար դրամ, կամ ավել է հավաքագրվել 14 միլիոն դրամ 582 հազար դրամ:

Անշարժ գույքի հարկի գծով ցածր հավաքագրումներ են արձանագրվել Գառնի համայնքում 61,3 %:

3. **Տեղական տուրքերի գծով** կատարողականը կազմել է 129,9 %: Նախատեսված 163 միլիոն 257 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 212 միլիոն 018 հազար դրամ, կամ ավել է հավաքագրվել 48 միլիոն 760 հազար դրամ: Տեղական տուրքերի գծով գրեթե բոլոր համայնքներում նախատեսված պլանը գերակատարվել է:

4. **Պետական տուրքեր** - Կատարողականը կազմել է 111,5%: Նախատեսված 48 միլիոն 345 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 53 միլիոն 913 հազար դրամ, կամ պլանը գերակատարվել է 5 միլիոն 567 հազար դրամով:

5. **<u>Հողի և գույքի վարձավճարների գծով</u>** կատարողականը կազմել է 100.9%: Նախատեսված 126 միլիոն 329 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 127 միլիոն 422 հազար դրամ: Ավել հավաքագրումը կազմել է 1 միլիոն 093 հազար դրամ:

Պլանավորվածից ցածր ցուցանիշ է արձանագրվել Ծաղկաձոր համայնքում 61.5%:

6. **<u>Աղբահանության վճարների գծով</u>** - առաջադրանքը կատարվել է 85.3%-ով: Նախատեսված 296 միլիոն 152 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 252 միլիոն 644 հազար դրամ, կամ 43 միլիոն 507 հազար դրամով պակաս գումար: Ցածր ցուցանիշներ են արձանագրվել հետևյալ համայնքներում Հրազդան՝ 54,1%, Բյուրեղավան՝ 45,8% և Գառնի 66.5%:

7. **<u>Սեփական եկամուտներ</u>** - առաջադրանքը կատարվել է 103.3%-ով: Ավել հավաքագրումը կազմել է 102 միլիոն 962 հազար դրամ: Առավել բարձր ցուցանիշներ են արձանագրվել Աբովյան , Ծաղկաձոր, Ակունք և Արզնի համայնքներում:

Նշեմ, որ սույն թվականի հունիսի 22-ին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի մոտ կայացել է ՀՀ մարզպետների մասնակցությամբ խորհրդակցության, որի ընթացքում հանձնարարվել է՝

Համայնքների կողմից գեներացվող սեփական եկամուտների հավաքագրման պլանավորումը համապատասխանեցնել առկա իրողություններին և բնակիչների՝ համայնքների առաջ ունեցած ֆինանսական պարտավորությունների մարման արդեն ավանդական դարձած վարքագծին:

Մասնավորապես անհրաժեշտ է ինտենսիվ աշխատաքներ տանել ինչպես անշարժ գույքի հարկի, այնպես էլ վարձակալությամբ տրամադրված հողերից վարձավճարների հավաքագրումների ցածր ցուցանիշները բարելավելու ուղղությամբ՝ ապահովելով պլանային ցուցանիշների առնվազն 90% կատարողական:

Առաջարկվում է կատարել համայնքների նախորդ տարիների բյուջեների վերլուծություն և առաջիկայում կազմակերպել բյուջեի իրատեսական պլանավորում և կազմում՝ հարկատեսակների առաջադրանքներում ներառելով նախորդ տարիների ապառքները:

Ֆինանսական վարչության պետ՝ **Հ.Ստեփանյան**